

ՄԵՐ ՄԱՍԻՆ

2017 թ.-ին Կալիֆորնիա նահանգի վարձակալների իրավունքները պաշտպանող բազմաթիվ կազմակերպություններ հավաքվել էին ՝ աջակցելու վարձակալների աճող ժողովրդային շարժումներին և ամրապնդելու մեր ուժը որպես տանիք ունենալու իրավունքի շարժում: Այս առաջին «Կալիֆորնիայի Վարձակալի Չորություն» հավաքին մասնակցել էին ավելի քան 400 մարդ, ներկայացնելով մի քանի տասնյակ կազմակերպություններ: Երկու օրվա ընթացքում Սան Ֆրանցիսկոյի մոտակայքի Ալամեդա ավագ դպրոցում մենք իրաի հետ կիսվեցինք հմտություններով, կառուցեցինք երկարատև հարաբերություններ եւ պլանավորեցինք, թե ինչպես առաջ շարժել մեր քարոզարշավները 2018-ին եւ դրանից հետո:

Դրանից հետո նահանգով մեկ վարձակալները սկսեցին տասնյակ նոր տան վարձերի հսկման քարոզարշավներ, եւ պայքարեցին Արաջարկ 10-ի օգտին, քվեարկությամբ քաղաքներին տան վարձի հսկման ընդլայնման իրավունքը վերադարձնելու փորձը: Այս քարոզարշավները աճող «վարձակալության դիմադրության» մի մասն են, որը բացի կանոնադրություն փոխելու պայքարից բացի, նաև ընդգրկում է վարձադուլներ, նոր վարձակալների միությունների ստեղծումը, ինչպես նաև վարձով ապրողների կյանքի կայունություն ու հողի և ապրելատեղի համայնքային վերահսկողության երկարաժամկետ լուծումներ գտնելու պահանջ:

Կալիֆորնիայի Վարձակալի Չորություն ժողովը շարժումային հարթակ է, կազմակերպված Վարձակալները Միասին կազմակերպության միջոցով և վարձակալների միությունների և խմբավորումների գլխավորությամբ: Ժողովը նաև ընդգրկում է նահանգային քարոզարշավներ Համայնքների Հզորացման Կալիֆորնիցիների Դաշինքի (Alliance of Californians for Community Empowerment) միջոցով, և ապրելատեղ ունենալու մարդու իրավունքը պաշտպանող ժողովրդային շարժումների աճի ու ամուր հիմք ստեղծելու համազգային ռազմավարության մի մասն է՝ “Ապրելատեղ Բոլորի Համար Կալիֆորնիա”-յի (Homes for All California) և “Քաղաքական Իրավունք”-ի (Right to the City) միջոցով: Մեր նպատակն է զարգացնել ժողովրդավարական միասնությունը, փոխակերպվել, եւ շարժում կառուցել: Մենք հասկանում ենք, որ միայն այդպես կարող ենք ձեռք բերել եւ պաշտպանել տեղական եւ նահանգային կանոնադրություններ և քաղաքականություն, որ պաշտպանում է Կալիֆորնիայի վարձակալների իրավունքները:

Կալիֆորնիայի Վարձակալի Չորություն հավաքները զորանում են կազմակերպվելով “Ապրելատեղ Բոլորի Համար” խմբի ձեզակերպված այս վեց սկզբունքների շուրջ.

1. Փոխադարձ խնամք եւ հարգանք:
2. Սովորեցնենք և սովորենք միմյանցից:
3. Արմատական (ներքևից վերև) ժողովրդավարություն:
4. Միոասնական Շարժում:
5. Միասին Մենք Կարող ենք Ազատագրվել:
6. Համերաշխություն:

Մենք մտադիր ենք զարգացնել մեր գնահատականը այս ժողովի ժամանակ, սակայն շարժումը ունի բնակարանային ճգնաժամի արմատների հետեւյալ գնահատականը. Մենք համարում ենք, որ մեր համայնքների շահույթամոլ շահագործման համակարգը տանտերերի, տնաշենների եւ անշարժ գույքի շահարկողների կողմից, որ բերում է աճող տան վարձավճարների, տեղահանման, և անտնության՝ չի աշխատում ցածր եկամուտ ունեցող մարդկանց համար: Ապրելատեղի արդարադատության համար մեր միասնական աշխատանքը հիմնված է ռասայական, տնտեսական եւ սեռերի արդարադատության սկզբունքների վրա: Մենք համարում ենք, որ մեկին վնաս հասցնելը վնասում է բոլորին: Մենք համարում ենք, որ ապահով ապրելատեղ ունենալը մարդու իրավունք է: Մենք համարում ենք, այս իրավունքը իրականություն դարձնելու համար

մենք պետք է կառուցենք վարձով ապրողների եւ ցածր եկամուտ ունեցող մարդկանց ուժը՝ իրենց համայնքները ձեւավորելու համար: Այս ընթացիկ շարժումը կանգնած է Կալիֆորնիայի եւ նրա սահմաններից դուրս գտնվող նախկին վարձակալների եւ բնակարանային շարժումների ուսերին, եւ մենք ձգտում ենք սովորել անցյալից՝ ապագան կառուցելու համար:

2019 թ.-ին մենք առաջարկում ենք հավաքել ավելի քան 600 Կալիֆորնիացի, շարունակելու խորացնել մեր հարաբերությունները եւ զարգացնել շարժումը: Բացի վարձակալների իրավունքների առաջին հավաքի օրակարգից, մենք ձգտում ենք ընդլայնել գրույցը հակաճգնաժամային պայքարից դուրս, ընդգրկելով ապահով ապրելատեղ ունենալու արդարադատութեան երկարաժամկետ ռազմավարությանը: Մենք մտադիր ենք ունենալ այնպիսի հարթակ, որը լուծումներ է փնտրում հողի համայնքային խնամակալության (community land trusts), համագործակցությունների (co-ops), “մատչելի բնակարանների” եւ այլ ժողովրդավարականորեն վերահսկվող ռազմավարությունների միջոցով:

Մինչև համանահանգային ժողովը, մենք կանցկացնենք առնվազն 2 տարածաշրջանային հավաքներ Զյուսիսային եւ Զարավային Կալիֆորնիայում՝ շարունակելու նախապատրաստական աշխատանքը, որ անհրաժեշտ է համանահանգային ժողովին հավաքական ռազմավարությանը ներգրավվելու համար:

Համանահանգային ժողովը կիրականացվի հոկտեմբերի առաջին կեսին՝ ուրբաթ, շաբաթ եւ կիրակի օրերին: Շաբաթ օրը մենք կանցկացնենք սեմինարներ տարբեր թեմաների շուրջ, որոնք կվարեն վարձակալների եւ բնակարանային կազմակերպությունները՝ գործընկերական փոխանակման ոգին խրախուսելու համար. Հավելյալ խորհրդատուներ կաջակցեն նախապատրաստական և կազմակերպչական հարցերում: Մեր բյուջեյի հնարավորությունների սահմաններում, մենք կարող է հրավիրենք սեմինարների վարողներ, որոնք մեզ նոր հմտություններ և ներուժ փոխանցեն: Ուրբաթ երեկոյան եւ կիրակի առավոտ ու մինչև կեսօր կունենանք հարաբերություններ խորացնելու, միասնություն կառուցելու, եւ անմիջական գործողությունների միանալու խրախուսող ծրագիր:

Ժողովի վերջում մենք հուսով ենք սահմանել այն հարցերն ու ռազմավարությունները, որոնց շուրջ մենք կցանկանանք առաջ շարժվել միասին, և ավելի խորը հասկանալ, թե որոնք են մեր շարժական միտումների ու նպատակի առնչման կետերը:

Հաճախ տրվող հարցեր

Ո՞վ է կազմակերպում Կալիֆորնիայի Վարձակալի Չորություն (CARP) 2019 ժողովը:

Հետեւյալ կազմակերպությունները պլանավորման հանձնաժողովի մասնակիցներն են: Եթե ցանկանում եք միանալ, խնդրում ենք կապվել մեր հետ այս հասցեյով. aimee@tenantstogether.org

- Ալամեդայի Վարձակալների Դաշինք (Alameda Renters Coalition)
- Կալիֆորնիացիների Համայնքի Հզորացման Դաշինք (Alliance of Californians for Community Empowerment)
- Causa Justa::Just Cause
- Արեւելյան Լոս Անջելեսի Կորպորացիա (East LA Community Corporation)
- Ապրելատեղ Բոլորի Համար Կալիֆորնիա (Homes for All California)
- Ապրելատեղ Լոնգ Բիչ (Housing Long Beach)
- Լոս Անջելեսի Համայնքային Իրավունքի եւ Գործողությունների Կենտրոն (Los Angeles Center for Community Law and Action)
- Լոս Անջելեսի Վարձակալների Միություն (Los Angeles Tenants Union)

- Լոնգ Բիչի Բնակիչների Ուժ (Long Beach Residents Empowered)
- Սուրբ Սրտի Համայնքային Ծառայություն - Սան Խոսե (Sacred Heart Community Service – San Jose)
- Ռազմավարական Պայքար Արդար Տնտեսության Համար (Strategic Actions for a Just Economy)
- Վարձակալներ Միասին (Tenants Together)

Ինչպես եմ կարող ներկայացնել սեմինարի առաջարկություն:
 Սեմինարի առաջարկություն ներկայացնել վերջնաժամկետն է՝ _____: Սեղմեք այստեղ ձեր առաջարկը ուղարկելու համար:

Ժողովի ժամանակ կտրամադրվի՞ ուտելիք, ապրելու տեղ, եւ երեխայի ինամք:

Ինչ լեզուներով կտրամադրվի՞ թարգմանություն:

Ցանկացած մարդ կարո՞ղ է միանալ:

Ի՞նչպես կարող եմ կամավոր լինել:

ԿԱՊ

Միացեք հոկտեմբերի համանահանգային ժողովի պլանավորման կոմիտեին, կապվեք մեր հետ հետևյալ հասցեով. aimee@tenantstogether.org

Պլանավորման կոմիտեն բաղկացած է հետևյալ պլանավորման ենթակոմիտեներից (ընտրեք թե որին եք ուզում մասնակցել)՝ Նախապատրաստական Տեղեկատվություններ և Կապ, Լրատվություն Ժողովի Ժամանակ, Օրակարգի կոմիտե, Լոգիստիկ կոմիտե, եւ Դրամահավաքի կոմիտե:

Մենք նաեւ կամավորների կարիք կունենանք ժողովի ընթացքում՝ օգնելու միջոցառման սահուն անց կացմանը: Կապվեք Լոգիստիկ կոմիտեին: Եթե հետաքրքրված եք, կապվեք Մեթթ Քինգի հետ, Սուրբ Սրտի Համայնքային Ծառայություն, mattk@sacredheartcs.org հասցեով: